ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2024 թվականի N 59-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴՐԱՆՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն և N731-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել Մեղրի համայնքի ղեկավարին համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո ինքնակամ կառույցը և առանձնացված հողամասը օրենքով սահմանված կարգով և գներով օտարել ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով և (կամ) տրամադրել օգտագործման վարձակալության իրավունքով:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -6	Դեմ -1	Ձեռնպահ -3
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ	ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ		ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		
ՄԱՐՈՒՍՅԱ		
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ		
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2024 թվականի հունիսի 19
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2024 թվականի N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 19-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի N64-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

2)Համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային հողամասերում քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո դրանք օտարելու և (կամ) վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հունիսի 19
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2024 թվականի N 58-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետով, ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N1358-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետով, 2024 թվականի մարտի 28-ի N439-Ն որոշմամբ հաստատված N2 հավելվածով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի «Հայաստնի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը հաստատելու մասին» N64-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հունիսի 19
ք.Մեղրի